## ԻՆՖՈՐՄԱՑԻԱ

1. 1960 թ. մարտին Սպիտակում տեղի ունեցավ Հայկական ԳԱ Ագրոքիմիայի լաբորատորիայի գիտաարտադրական խորհրդակցություն շրջանի գյուղատնտեսական աշխատողների և ակտիվի հետ համատեղ, նվիրված շրջանի քիմիացման հարցերին։

Խորհրդակցությունում լսվեցին հետևյալ զեկուցումները՝ «Երկրագործության քիմիացման նշանակությունը գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման գործում» զեկուցող՝ ակադ. Գ. Ս. Դավթյան, «Պարարտանյութերի արդյունաբերության զարգացման հեռանկարները Հայաստանում» զեկուցող՝ Կիրովականի քիմիական կոմբինատի դիրեկտոր Ս. Թևոսյան, «Սպիտակի շրջանում կատարված դաշտային փորձերի արդյունքները» զեկուցող՝ Սպիտակի սովխոզի դիրեկտոր Հ. Գյուլազյան, «Պարարտանյութերի ազդեցությունը եգիպտացորենի բերքատվության վրա Սպիտակի շրջանում» զեկուցող՝ գիտական աշխատող Գ. Մարտիրոսյան, «Բորի և մանգանի ազդեցությունը շաքարի ճակնդեղի բերքատվության վրա Սպիտակի շրջանում» զեկուցող՝ գիտական աշխատող Ի. Յուզբաշյան։

Խորհրդակցությունում քննարկվեց Հայկական ՍՍՌ ԳԱ Ագրոքիմիայի լաբորատորիայի կողմից կազմված Սպիտակի սովխոզի քիմիացման պլանը։

Խորհրդակցությունը իր որոշումների մեջ հավանություն տվեց Սպիտակի սովխոզի քիմիացման պլանին և նշեց մոտակա տարիներում Սպիտակի շրջանի մնացած սովխոզների և կոլխոզների համար քիմիացման պլան կազմելու անհրաժեշտությունը։

2. 1959 թ. դեկտեմբերին Մոսկվայում կայացած Համամիութենական խորհրդակցությունում, որը նվիրված էր հողերի գնահատման և ագրոքիմիական բնութագրման հարցերին, «Հայաստանի հողերի ագրոքիմիական բնութագրման մասին» թեմայով զեկուցում ներկայացրին պրոֆ. Գ. Ս. Դավթյանը և Գ. Բաբայանը (զեկուցեց Գ. Բաբայանը)։

3. 1959 թ. նոյեմբերին Լենինգրադում կայացած Համամիութենական խորհրդակցությունում, որը նվիրված էր «Միկրոօրգանիզմների և նրանց կենսագործունեության պրոդուկտների դերը բույսերի սննդառության գործում» պրոբլեմին, գիտական աշխատողներ՝ Գ. Բաբայանը և Ս. Կարագուլյանը զեկուցում կարդացին «Գիբերելինի ազդեցությունը պարարտանյութերի էֆեկտիվության վրա» թեմայով։

4. Գիտական աշխատող Վ. Անանյանը մասնակցել է 1960 թ. ապրիլին Մոսկվայում կայացած կոորդինացիոն խորհրդակցությանը, որը նվիրված էր հետևյալ պրոբլեմին «Միջուկային շողարկման հիմնական օրինաչափությունները և բիոլոգիական օբյեկտների վրա նրա ներգործման մեխանիզմը»։

5. 1960 թ. Նովոչերկասկում կայացավ 14-րդ հիդրոքիմիական խորհրդակցություն, նվիրված վերերկրյա և ստորերկրյա ջրերի հիդրոքիմիական ուսումնասիրության մեթոդիկայի հարցերին։ Այդ խորհրդակցության աշխատանքներին մասնակցեց Լաբորատորիայի գիտական աշխատակից Օ. Գասպարյանը։

6. 1960 թ. օգոստոսին ԱՄՆ-ում (ք. Մեդիսոն) տեղի ունեցավ Հողագետների Համաշխարհային ընկերության յոթերորդ միջազգային կոնգրեսը։ Այդ կոնգրեսի աշխատանքներին մասնակցեց Ագրոքիմիայի լաբորատորիայի դիրեկտոր պրոֆ. Գ. Ս. Դավթյանը և զեկուցում կարդաց «Հողային տիպերի ագրոքիմիական բնութագրման մասին» թեմայով։

7. 1960 թ. սեպտեմբերին Թբիլիսի քաղաքում կայացավ Ագրոքիմիկոսների երրորդ Անդրկովկասյան խորհրդակցությունը, որի աշխատանքներին զեկուցումներով մասնակցեցին Ագրոքիմիայի լաբորատորիայի հետևյալ գիտական աշխատողները՝ պրոֆ. Գ. Ս. Դավթյան, Գ. Բաբայան, Վ. Անանյան, Ի. Յուզբաշյան, Ա. Գալստյան, Ս. Կարագուլյան, Բ. Աստվածատրյան, Օ. Գասպարյան, Ն. Մելքոնյան, Օ. Գարբինյան, Թ. Վարդանյան։

8. 1960 թ. հոկտեմբերին ՍՍՌՄ-ի, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի Գիտությունների ակադեմիաների հոբելյանական միացյալ սեսիայում, նվիրված Հայաստանի սովետականացման 40 ամյակին, Ագրոքիմիայի լաբորատորիայի դիրեկտոր պրոֆ. Գ. Ս. Դավթյանը զեկուցում կարդաց «Բույսերի անհող մշակույթի պրոբլեմի մասին»։

9. Ագրոքիմիայի լաբորատորիայի գիտական քարտուղար Գ. Բ. Բաբայանը 1960 թ. հուլիսին եղավ Բելգիայում, որտեղ ծանոթացավ անհող միջավայրում բույսերի աճեցման աշխատանքների հետ։

## ИНФОРМАЦИЯ

1. В марте 1960 г. в районном центре Спитак состоялось научно-производственное совещание Лаборатории агрохимии Академии наук Армянской ССР совместно с работниками сельского хозяйства и районным активом, посвященное химизации земледелия района.

На совещании были сделаны следующие доклады:

Акад. Г. С. Давтян — О значении химизации земледелия в повышении урожая сельскохозяйственных культур.

Директор Кироваканского химкомбината С. Тевосян — Перспективы развития туковой промышленности Армении в семилетке.

Директор Спитакского совхоза О. Г. Гюлазян — Результаты полевых опытов с удобрениями, проведенных в Спитакском районе.

Научный сотрудник Г. М. Мартиросян — Влияние удобрения на урожай кукурузы в Спитакском районе.

Старший научный сотрудник И. Р. Юзбашян — Влияние бора и марганца на урожай сахарной свеклы.

На совещании обсуждался составленный Лабораторией агрохимии АН Армянской ССР план химизации Спитакского совхоза. Совещание одобрило этот план и отметило необходимость составления в ближайшие годы планов химизации также для остальных совхозов и колхозов Спитакского района.

2. В декабре 1959 г. в Москве, на Всесоюзном совещании по агрохимической характеристике и бонитировке почв, с докладом на тему «Об агрохимической характеристике почв Армении» участвовали проф. Г. С. Давтян и Г. Б. Бабаян.

3. В ноябре 1959 г. в Ленинграде, на Всесоюзном совещании об итогах и задачах исследований роли микроорганизмов и продуктов их жизнедеятельности в питании растений, старшими научными сотрудниками С. А. Карагулян и Г. Б. Бабаян был сделан доклад на тему «Влияние гиббереллина на эффективность удобрений».

4. Старший научный сотрудник В. Л. Ананян приняла участие в работах состоявшегося в апреле 1960 г. в Москве научно-методического совещания по проблеме «Распределение, миграция радиоактивных веществ в природе» и координационного совещания по проблеме «Основные закономерности и механизмы действия ядерных излучений на биологические объекты».

5. В мае 1960 г. в Новочеркасске состоялось XIV гидрохимическое совещание по вопросам методики гидрохимических исследований поверхностных и подземных вод. В работе этого совещания приняла участие научная сотрудница О. Б. Гаспарян.

6. В августе 1960 г. в США (г. Медисон) состоялся VII конгресс Международного общества почвоведов. В работе этого конгресса принял участие директор Лаборатории агрохимии, профессор Г. С. Давтян, который сделал доклад на тему «Об агрохимической характеристике почвенных типов».

7. 21—25 сентября 1950 г. в г. Тбилиси состоялось III Закавказское совещание по агрохимии. В работе совещания приняли участие научные сотрудники Лаборатории агрохимии Г. С. Давтян, Г. Б. Бабаян, А. Ш. Галстян, В. Л. Ананян, Б. Н. Аствацатрян, С. А. Карагулян, И. Р. Юзбашян, О. Б. Гаспарян, Н. Р. Мелконян, О. А. Дарбинян, Т. Т. Варданян, представив свои доклады.

8. В октябре 1960 г. в г. Ереване, на объединенной юбилейной сессии Академии наук СССР, академий Грузинской, Азербайджанской и Армянской ССР, посвященной 40-летию установления Советской власти в Армении, директор Лаборатории агрохимии АН Армянской ССР проф. Г. С. Давтян сделал доклад на тему «О проблеме культуры растений без почвы».

9. В июле 1960 г. ученый секретарь Лаборатории агрохимии Г. Б. Бабаян побывал в Бельгии, где ознакомился с работами по выращиванию растений без почвы.